



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

# ՔԱՐՈՉ

## ՎԱՐԴԱՎԱՌԻ\*

«Եւ վեց օր յետոյ Յիսուս իր Հետ վերցրեց Պետրոսին, Յակոբոսին ու Յովհաննէսին եւ նրանց առանձին Հանեց մի բարձր լեռ: Եւ նրանց առաջ կերպարանափոխուեց»<sup>†</sup>:

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Ա  
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ  
ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱԻ  
Տ. ՊԱՐԳԵԻԻ  
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ  
ԱՌԱԶՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Սոյն վարդապետը Հրատարակում է  
LINCY FOUNDATION-ի  
Պեկենասոն-Թեմոսք



Տո՛ր ինձ, Տէ՛ր, խրատող լեզու<sup>‡</sup>, որպէսզի իմաստնաբար խօսեմ այս ժամին: Ծագո՛ւմն փառաց<sup>1</sup>, փարատի՛ր մտքիս խաւարը: Փչո՛ւմն շնորհաց, փչի՛ր իմ շուրթերին կեանքի խօսքեր, քանզի առանց Քեզ մարդու բոլոր խօսքերն անմտութիւն են, եւ ամենայն մարդկային իմաստութիւն տգիտութիւն է: Միայն յանուն Քո փառքի եւ Քեզանով կարող եմ դոյզն-ինչ բացայայտել իմաստը Աւետարանի այս խօսքի.

«Եւ վեց օր յետոյ<sup>2</sup> Յիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Յակոբոսին ու Յովհաննէսին եւ նրանց առանձին հանեց մի բարձր լեռ: Եւ նրանց առաջ կերպարանափոխուեց. նրա դէմքը փայլեց ինչպէս արեգակը, եւ նրա զգեստները դարձան սպիտակ ինչպէս լոյսը: Եւ ահա նրանց երեւցին Մովսէսն ու Եղիան, որ խօսում էին նրա հետ: Պետրոսը պատասխան տուեց եւ ասաց Յիսուսին. «Տէ՛ր, լաւ է, որ մենք այստեղ լինենք: Եթէ կամենաս, երեք տաղաւար շինենք. մէկը՝

\* Տե՛ս «Քարոզ Վարդապետին» («Գիրք քարոզութեան, որ կոչի Ամատան հատոր», Կ. Պոլիս, 1741, գլ. ԸՄԷ, էջ 481):

† Մատթ ԺԷ 1, Մարկ. Թ 1

‡ Տե՛ս Եւ. Ծ 4, Իմաստ. է 15:

Քեզ համար, մէկը՝ Մովսէսի, մէկն էլ՝ Եղիայի»։  
Եւ մինչդեռ նա խօսում էր, ահա մի լուսաւոր  
ամպ հովանի եղաւ նրանց, ամպից մի ձայն եկաւ  
ու ասաց. « Դա է Իմ սիրելի Որդին, Դրա՛ն լսե-  
ցէք »։ Երբ աշակերտները լսեցին այս, երեսի վը-  
րայ ընկան ու սաստիկ վախեցան։ Եւ Յիսուս մօ-  
տենալով՝ դիպաւ նրանց ու ասաց. « Ոտքի՛ ելէք  
եւ մի՛ վախեցէք »։ Նրանք աչքները բարձրացրին  
եւ Յիսուսից բացի ոչ ոքի չտեսան։ Եւ մինչ լեռից  
իջնում էին, Յիսուս նրանց պատուիրեց ու ասաց.  
« Այդ տեսիլքը ոչ ոքի չասէ՛ք, մինչեւ որ Մարդու  
Որդին մեռելներից յարութիւն առնի »\* »։

\*\*\*

Ա. Ինչո՞ւ է Մատթէոսն ասում վեց օր յե-  
տոյ, իսկ Ղուկասը՝ ութ՛ :

Ամենից առաջ ասենք, որ Ղուկաս անտա-  
րանիչը նկատի ունի նաեւ այն երկու օրերը, ո-  
րոնցից առաջինում Պետրոսը դասանեց Տիրոջը<sup>†</sup>,  
իսկ վերջինում Քրիստոս պայծառակերպուեց<sup>‡</sup>։  
Իսկ Մատթէոսը խօսում է այս երկուսի միջեւ ըն-  
կած վեց օրերի մասին։ Եւ սա խորհուրդ ունի.  
Մատթէոսը սրանով խորհրդանշում է Քրիստոսի  
առաջին Գալուստը՝ վեցերորդ դարաշրջանում,  
իսկ Ղուկասը՝ երկրորդ Գալուստը՝ կանխայայտ-  
նելով, որ այն լինելու է ութերորդ դարաշրջա-  
նում<sup>‡</sup>։ Եւ դարձեալ՝ Մատթէոսն այլաբանօրէն  
ցոյց է տալիս, որ Տէրն Իր առաջին Գալստեամբ  
վերցրեց մեր մեղքերը, որոնք գործում ենք վեցա-  
կի շարժմամբ<sup>‡</sup>, իսկ Ղուկասը վկայում է, որ Նա  
նաեւ սրբեց մեզ ութ խորհուրդներից<sup>§</sup>։

\* Մատթ. ԺԷ 1-9

† Տե՛ս Ղուկ. Թ 28:

‡ Տե՛ս Ղուկ. Թ 20:

§ Տե՛ս Ղուկ. Թ 29:

Բ. Ինչո՞ւ Տէրը տասներկու աշակերտներից  
միայն երեքին՝ Պետրոսին, Յակոբոսին եւ Յով-  
հաննէսին Իր հետ լեռը տարաւ։

Նախ՝ որովհետեւ նրանց հոգու տեսողու-  
թիւնը միւսներից առաւել պայծառ էր, ինչպէս որ  
մարդու զգայարաններից միայն աչքն է տեսնում,  
եւ կամ մէկի աչքի տեսողութիւնը անելի պայծառ  
է, քան միւսինը։ Այս պատճառով Իր Աստուա-  
ծութեան փառքը<sup>‡</sup> միայն նրանց պայծառ տես-  
ողութեանը ցոյց տուեց։

Երկրորդ՝ Պետրոսն առաքելների գլուխն  
էր\*, Յովհաննէսն առաջինն էր անտարանիչնե-  
րի մէջ<sup>‡</sup>, իսկ Յակոբոսը տասներկուսից առաջինը  
մարտիրոսացաւ<sup>†</sup>։

Յրորո՞ղ Պետրոսը բոլորից շատ էր սիրում  
Քրիստոսին ըստ Տիրոջ պատգամի<sup>‡</sup>, Յովհաննէ-  
սը Նրա սիրելի աշակերտն էր (ինչպէս գրուած  
է. « Այն աշակերտը, որին սիրում էր Յիսուս »<sup>§</sup>),  
իսկ Յակոբոսը յանձն առաւ խմել Քրիստոսի  
չարչարանքների բաժակը\*\*։

Չորրորդ՝ այդ տեսութեանն արժանի չէր Յու-  
դան, եւ եթէ Տէրը բոլորին տանէր, իսկ Յուդա-  
յին՝ ոչ, վերջինս իրեն իրաւացի կհամարէր Քրիս-  
տոսին մատնելու համար։

Հինգերորդ՝ որպէսզի չխախտուի կարգն ու  
սահմանը, քանզի առաջնային խորհուրդները  
պէտք է առաջիններն իմանան, իսկ առաւել  
նուազ խորհուրդները՝ միւսները։

Վեցերորդ՝ քանի որ Տէրն օրինադրեց, թե՛  
երկու կամ երեք վկայով հաստատուում է ամէն

\* Տե՛ս Մատթ. ԺԶ 18, Յովհ. ԻԱ 15-18:

† Մարտիրոսութիւն - հասարի վկայութիւն մահով

‡ Տե՛ս Յովհ. ԻԱ 15-17:

§ Յովհ. ԺԳ 23, ԺԹ 26, Ի 2, ԻԱ 7, 20:

\*\* Տե՛ս Մատթ. Ի 22, Մարկ. Ժ 39:

քան\*, ուստի պետք էր, որ Իր Աստուածութեան հաստատման համար նախ երեք վկաներ լինէին:

Եօթերորդ՝ մեզ օրինակ ցոյց տուեց, թէ ինչպէս է պետք մարդուն հաղորդակից դարձնել խորհուրդներին, քանզի պատշաճ չէ առանց աւագների մեծագոյն խորհուրդները յայտնի դարձնել կրօնականներին:

Ութերորդ՝ այսպիսի փառքը չպետք է յայտնել բազմութեան մէջ, այլ՝ առանձին եւ այն էլ գիտուն եւ անթերի մարդու:

Իններորդ՝ աշակերտներից ոչ ոք, բացի նրանցից, ում տարաւ Իր հետ, արժանի չէր Նրա Աստուածութեան փառքը տեսնելու, ուստի միայն նրանց երեքին տարաւ:

Տասներորդ՝ սրանով խորհրդաբար ցոյց տուեց Իր երկրորդ Գալուստն արժանապէս դիմատրոդների կարգը, քանզի Պետրոսը, որ ծեր էր, խորհրդանշում էր հարիւրաւորներին, Յակոբոսը, որ միջին տարիքի էր, վաթսուներեքներին, իսկ Յովհաննէսը, որ երեսնամեայ երիտասարդ էր, երեսներներին<sup>6</sup>:

Գ. Իսկ ինչո՞ւ մարգարէներից Մովսէսին ու Եղիային բերեց:

Նախ՝ որովհետեւ նրանք միւս մարգարէներից առաւել պատուական էին՝ մէկը՝ դէմքի լուսափայլմամբ<sup>7</sup>, իսկ միւրը՝ հրեղէն կառքով երկինք բարձրանալով<sup>8</sup>:

Երկրորդ՝ որպէսզի ցոյց տայ, որ Ինքն է Օրէնսիրը եւ չի դրժում Աստուծոյ Ուխտը (ինչպէս կարծում էին հրեաները), ուստի եւ որպէս Իր Աստուածութեան վկայ բերեց Մովսէսին եւ Իս-

\* Տե՛ս Բ Օր. ԺԹ 15:

† Տե՛ս Ել. ԼԴ 29-35:

‡ Տե՛ս Դ Քազ. Բ 11:

րայէլի Աստուծոյ նախանձախնդիր Եղիային<sup>9</sup>:

Երրորդ՝ քանզի Մովսէսին բերեց մեռեալների միջից, իսկ Եղիային՝ ողջերի<sup>9</sup>, որպէսզի ցոյց տայ, որ Ինքն է Տէրը ողջերի ու մեռեալների:

Չորրորդ՝ Եղիային երկնքից բերեց, իսկ Մովսէսին՝ երկրից՝ սրանով ցոյց տալով, որ Ինքն է Աստուած երկնքի ու երկրի:

Հինգերորդ՝ որպէսզի ցոյց տայ Իր մեծութիւնը, քանզի նրանք, որ հնում մեծ ու պատուաւոր էին, այժմ սպասաւորում ու երկրպագում էին Իրեն, ինչը տեսնելով՝ առաքեալներն անշուշտ պիտի հնազանդուէին Տիրոջը:

Վեցերորդ՝ որպէսզի աշակերտներին ուսուցանի ժողովրդի հանդէպ մեծ սէրը, ինչպէս նաեւ՝ երբեմն անհրաժեշտ սաստն ու խրատը, քանզի Մովսէսը ժողովրդի համար յօծար էր իր անունը ջնջել կենաց գրքից<sup>10</sup>, իսկ Եղիան երկինքը փակեց նրանց մեղքերի պատճառով<sup>11</sup>:

Եօթերորդ՝ որպէսզի առաքեալները չուսահատուէն անընչութեան եւ աղքատութեան պատճառով, այս մարգարէներին բերելով յիշեցրեց, որ մէկին երկնքից էր կերակուր տալիս<sup>12</sup>, իսկ միւսին՝ սնուցում ազուաների միջոցով<sup>13</sup>, որովհետեւ նրանք Իր աշակերտներն ու կամարարներն էին:

Ութերորդ՝ որպէսզի չուսահատուէն տկարութեան պատճառով, Մովսէսին ու Եղիային բե-

\* Տե՛ս Գ Քազ. ԺԹ 10, 14. Եղիան վկայում է իր մասին՝ ստելով Աստուծուն. «Նախանձախնդրութիւն ունեցալ Ամենակալ Տիրոջ համար, քանզի խրայէլացիները որժեցին «Ռ Ուխտը»:

† Տե՛ս Ել. ԼԲ 32:

‡ Տե՛ս Գ Քազ. Ը 35-36:

§ Աստուած անսպասում Մովսէսին եւ Իսրայէլի ժողովրդին կերակրում էր մանանգով (տե՛ս Ել. ԺԶ 13-15, 35):

\*\* Եղիա մարգարէին ամէն օր ազուաները հաց եւ միս էին բերում (տե՛ս Գ Քազ. ԺԷ 6):

րելով իշեցրեց, թէ ինչպէս, տկար լինելով հանդերձ, Մովսէսը յաղթեց փարաւոնին\*, իսկ Եղիան՝ Աքաաթին†, որով եւ յուսապնդեց առաքեալներին, որ չերկնչեն, քանզի պիտի յաղթեն բոլոր բռնատրւներին:

Ինճերորդ՝ սրանով աշակերտներին ցոյց տուեց մի կողմից՝ Աստուծոյ հնազանդ լինելը եւ միւս կողմից՝ Նրա Օրէնքի համար նախանձաւոր ու վրէժխնդիր լինելը, ինչպէս որ Մովսէսը Աստուծոյ հեզ ծառան էր‡, իսկ Եղիան հոտ էր իջեցնում երկնքից§:

Տասներորդ՝ նրանց բերեց, որպէսզի առաքեալներն իմանան. ինչպէս որ նրանց իշխանութիւն տուեց տարերքների վրայ, այնպէս էլ իրենց կտորուի այսպիսի իշխանութիւն. եւ ինչպէս որ նրանք չար ու դաւնացող ազգի հովիւ եւ առաջնորդ եղան, այնպէս էլ իրենք չպիտի երկնչեն նեղութիւններից, որովհետեւ ժողովուրդների առաջնորդներ եւ հովիւներ են լինելու:

Դ. Ինչպէ՞ս աշակերտները ճանաչեցին Մովսէսին ու Եղիային:

Նախ՝ ասում են, թէ ինչպէս որ Յովհաննէս Մկրտիչը բազմամարդի ժողովրդի մէջ Սուրբ Հոգով ճանաչեց Տիրոջը եւ վկայեց, թէ Նա է Քրիստոս\*\*, այնպէս էլ առաքեալները Սուրբ Հոգով ճանաչեցին Եղիային ու Մովսէսին:

Երկրորդ՝ նրանք յայտնուեցին՝ մէկը՝ երեսը քողով ծածկած, որը Մովսէսն էր, իսկ միւսը՝ կաշուէ հագուստով, որը Եղիան էր, ինչի մասին

արդէն իսկ գիտէին Սուրբ Գրքից\*:

Երրորդ՝ քանի որ լսել էին Գրքից, թէ Մովսէսի դէմքը լուսատուեց†, եւ այժմ էլ նա նոյն տեսքով յայտնուեց Տիրոջ կողքին, ուստի ճանաչեցին. իսկ Եղիան եկաւ հրեղէն կառքով, եւ ճանաչեցին՝ գիտե՞նալով, որ նա այդպէս է վերափոխուել երկնքից‡:

Չորրորդ՝ Մովսէսի ձեռքին տախտակ երեսաց, որ կրում էր իր հետ, այսինքն՝ Աստուծոյ պատուիրանները, իսկ Եղիայի ձեռքին՝ կաշուէ վերարկու:

Հինգերորդ՝ առաքեալներին Սուրբ Գրքից վաղուց ծանօթ էր նրանց նկարագրութիւնը, եւ ճանաչեցին Եղիային՝ թաւամազՑ, իսկ Մովսէսին՝ ճօրառեր լինելով:

Վեցերորդ՝ ոմանք ասում են, թէ նրանցից իսկ լսեցին իրենց անունները, երբ երկրպագելով մեծարում էին Քրիստոսին:

Եօթերորդ՝ ուրիշներն ասում են, թէ, նրանց հետ խօսելով, Քրիստոս ինքը տուեց նրանց անունները, որպէսզի աշակերտներն իմանան:

Ութերորդ՝ ոմանք ասում են, թէ Մովսէսը, կանչուած լինելով մտելներից, հողոտ էր, եւ քանի որ լսել էին, թէ նա անապական է մնացել, եւ մտեալների մէջ ուրիշ ոչ ոք այդպիսին չէր, ուստի ճանաչեցին նրան: Իսկ Եղիային ճանաչեցին նրա՝ երկնքի պէս լուսափայլող դէմքից՝ իմանալով, որ գալիս է երկնքից եւ տակաւին կենդանի է:

Ինճերորդ՝ ճանաչեցին, քանզի հրեաներն ասում էին, թէ Եղիան գալու է, եւ շարունակ սպա-

\* Տե՛ս էլ. Ժ. ԺԲ:

† Տե՛ս Գ Թագ. ԺԸ, ԻԱ:

‡ Տե՛ս Թ. ԺԲ 3:

§ Տե՛ս Գ Թագ. ԺԸ 36-39:

\*\* Տե՛ս Յովհ. Ա 29-34:

\* Տե՛ս էլ. ԼԳ 31-33, Գ Թագ. ԺԹ 13:

† Տե՛ս էլ. ԼԳ 29-35:

‡ Տե՛ս Գ Թագ. Բ 11:

§ Տե՛ս Գ Թագ. Ա 8:

սում էին նրան, իսկ մարդ, երբ սպասում է մէկին, նրա յայտնուելիս դիրութեամբ ճանաչում է: Իսկ Մովսէսի մասին Տիրոջից լսեցին:

Տասներորդ՝ որովհետեւ մինչեւ լեռ գալը Տէրը հարցրեց աշակերտներին. «Ի՞նչ եմ ասում իմ մասին. Ո՞վ եմ ես», եւ նրանք պատասխանեցին. «Ոմանք ասում են՝ Եղիան, իսկ ոմանք՝ Մովսէսը»\*, որի համար էլ լեռ հանեց եւ այս երկուսին քերեց նրանց դէմ-յանդիման՝ ասելու համար. ահաւասիկ Եղիան եւ Մովսէսը, իսկ ես Միածին Որդին եմ Աստուծոյ: Որից յետոյ Հայրը վկայեց. «Դա է իմ սիրելի Որդին. Նրա՛ն լսեցէք»†:

Ե. Այժմ տեսնենք, թէ ինչու Քրիստոս պայծառակերպուեց:

Նախ՝ երբ ասաց իր՝ Երուսաղէմում չարչարուելու մասին, աշակերտները երկիւղեցին, թէ Նա մարդու մահով է մեռնելու‡: Այս պատճառով այժմ ցոյց տուեց իր Աստուածութիւնը՝ ուսուցանելով, որ թէպէտ մեռնում է հրեաների ձեռքով, սակայն որպէս Աստուած անմահ է մնում:

Երկրորդ՝ որպէսզի ցոյց տայ նրանց, որ ինքն է խաւարի, տգիտութեան եւ անաստուածութեան հալածիչը, ինչպէս որ նախքան այդ ասաց. «Ես՝ Լոյսս, եկայ աշխարհ, որպէսզի ով որ հաւատայ ինձ, խաւարի մէջ չմնայ»§:

Երրորդ՝ որպէսզի ինչպէս որ Պետրոսը Նըբան դաւանեց Աստուծոյ Որդի\*\* և այժմ յայտնապէս տեսնեն ու լսեն Հօր վկայութիւնը:

Չորրորդ՝ Նա պայծառակերպուեց, որպէսզի

կատարուի մարգարէների խօսքը, թէ՛ գեղեցիկ է մարդկանց բոլոր որդիներից\*:

Հինգերորդ՝ որպէսզի աշակերտներին ցոյց տայ, թէ Դատաստանին ինչ կերպարանքով է գալու:

Վեցերորդ՝ որպէսզի յայտնի իր միակամութիւնն ու փառակցութիւնը Հօր եւ Սուրբ Հոգու հետ:

Եօթերորդ՝ առաքեալները խորհում էին, թէ այն լուսեղէն զգեստը, որ Աստուած վերցրեց Ադամից<sup>10</sup>, վերստին տալու՞ է մարդկանց, թէ՛ ոչ, որի համար էլ Քրիստոս Պայծառակերպութեամբ ցոյց տուեց, որ ինքը, Ադամի բնութեամբ մարմնանալով, մեզ վերստին հազցրեց նոյն փառքի զգեստը:

Ութերորդ՝ ինչպէս որ ասաց, թէ արդարները երկնքի արքայութեան մէջ կծագեն, ինչպէս արեգակը†, այժմ յայտնապէս ցոյց տուեց արդարների փառքի կերպարանքը, որ լինելու է իր նմանութեամբ, ինչպէս գրուած է. «Նրա նման ենք լինելու, ինչպէս տեսանք Քարոյ լեռան վրայ»‡:

Իններորդ՝ քանի որ Տէրը շուտով խաչ էր հանուելու, ուստի պայծառակերպուեց, որպէսզի չերկմտեն, երբ խաչի վրայ իրեն տգեղացած տեսնեն:

Տասներորդ՝ Տիրոջ Թարութիւնից յետոյ աշակերտները Նրան նոյն կերպարանքով պիտի տեսնէին, որի համար էլ պայծառակերպուեց, որպէսզի երբ Թարութիւնից յետոյ տեսնեն, հաւատան, թէ նոյն ինքն է, Ում տեսան նախապէս: Դարձեալ՝ աշակերտները տարակուսում էին, թէ

\* Տե՛ս Մատթ. ԺԶ 13-14:

† Մատթ. ԺԷ 5, Մարկ. Թ 6

‡ Տե՛ս Մատթ. ԺԶ 21-22:

§ Յովհ. ԺԲ 46

\*\* Տե՛ս Մատթ. ԺԶ 16:

\* Տե՛ս Սաղմ. ԽԳ 3:

† Մատթ. ԺԳ 43:

‡ Հմմտ. Ա Յովհ. Գ 2, Բ Պետ. Ա 17-18:

ինչպիսիսն էր Ադամի փառքը, որ կորցրեց, որի համար էլ պայծառակերպուելով՝ նրանց ցոյց տուեց այն: Նաեւ՝ այն պատճառով, որպէսզի պապանձոտի Նեստորի<sup>11</sup> եւ միւս հերձուածող-ների բերանը, որոնք ասում էին, թէ Տիրոջ մարմինը ապականելի էր մինչեւ խաչելութիւն<sup>12</sup>. ուստի խաչից առաջ ցոյց տուեց նրա անապականութիւնը, ինչի մասին էլ Յարութիւնից յետոյ ասաց. «Յօշակեցէ՛ք, քանզի Ես նոյնն եմ, որ Քաբորի վրայ տեսաք անապական մարմնով»\*, քանզի, ըստ մարգարէի, Նրա մարմինը ապականութիւն չտեսաւ:

Զ. Իսկ ինչո՞ւ Պետրոսն ասաց. «Տէ՛ր, լաւ է, որ մենք այստեղ լինենք»:

Նախ՝ որովհետեւ լեռան վրայ ապահով կլի-նէին հրեաների հալածանքից, ուստի ասաց. «Լաւ է, որ մենք այստեղ լինենք»:

Երկրորդ՝ քանի որ Տէրը մինչ այդ ասել էր իր չարչարանքների մասին, երկիւղելով Նրա խաչելութիւնից՝ ասացին. «Լաւ է, որ մենք այստեղ լինենք»:

Երրորդ՝ այնտեղի բոյսերն ու ծաղիկները, աստուածային փառքից փարթամացած, անուշահոտ բուրոյմ էին, եւ նրանք զմայլուած ասում էին. «Լաւ է, որ մենք այստեղ լինենք»:

Չորրորդ՝ Մովսէսին ու Եղիային ընկերակից տեսնելով իրենց Վարդապետին՝ խորհեցին, որ լաւ է նրանց մերձ լինել, քան խաչ հանողներին:

Հինգերորդ՝ յիշելով, որ Մովսէսն առանց ջանքի մանանայ էր իջեցնում երկնքից<sup>†</sup>, իսկ Եղիան՝ անձրեւ<sup>‡</sup>, խորհում էին, որ ուրիշ տեղի

կարիք չունեն, ուստի ասացին. «Լաւ է, որ մենք այստեղ լինենք»:

Վեցերորդ՝ քանի որ այստեղ էր ինքը Տէրը, որ անապատում ծողովորդի համար բազմացրեց հացը եւ ձուկը\*, ուստի, խորհելով, որ ոչնչի կարիք չունեն, ասացին. «Լաւ է, որ մենք այստեղ լինենք»:

Եօթերորդ՝ որովհետեւ ամպը հովանի էր նը-րանց, իսկ տեղը՝ լեռնային ու բարեխառն՝ ոչ այնպէս, ինչպէս տօթակէզ դաշտավայրում, ասացին. «Լաւ է, որ մենք այստեղ լեռան վրայ լի-նենք»:

Ութերորդ՝ Քրիստոսին լեռան վրայ այդպէս պայծառացած տեսնելով՝ կարծում էին, որ եթէ լեռից իջնեն, այլեւս չեն տեսնի Նրան այսպէս, ուստի ասացին. «Լաւ է, որ մենք այստեղ լի-նենք»:

Իններորդ՝ աշակերտները, շրջելով Քրիստոսի հետ, երբէք Նրան չէին տեսել պայծառակերպուած: Իսկ այժմ, Տիրոջն այսպէս տեսնելով, ուրախացան Նրա փառքի համար:

Տասներորդ՝ քանի որ մինչ այդ առաքելա-նէրն իրենց տեսած ամէն ինչին նաեւ հաղորդա-կից էին եղել, ինչպէս օրինակ՝ Տիրոջ Մկրտու-թեանն ու սքանչելիքներին, այժմ, տեսնելով Նրա պայծառութիւնը, կամենում էին դրան եւս հաղորդակցուել, ուստի ասացին. «Լաւ է, որ մենք այստեղ լինենք»:

Է. Ինչո՞ւ Պետրոսն ասաց. «Երեք տաղա-ւար շինենք»: Այն պատճառով, որ ապշած էին ու չգիտէի՞ն ինչ ասել<sup>†</sup>... Այս խօսքը, սակայն, հոգեւոր խորհուրդ ունի:

\* Հմմտ. Ղուկ. ԻՂ. 39:

† Տե՛ս Մատթ. ԺԵ 10:

‡ Տե՛ս Եղ. ԺԶ 13-15, 35:

§ Տե՛ս Գ. Թագ. ԺԸ 41-45:

\* Տե՛ս Մատթ. ԺԴ 19-21, ԺԵ 36-38, Մարկ. Զ 41-44, Ը 6-9, Ղուկ. Թ 16-17, Յովհ. Զ 11-13:

† Տե՛ս Մարկ. Թ 5, Ղուկ. Թ 33:

Դրանով նա ուզում էր ասել. մեր հոգին, միտքն ու մարմինը<sup>13</sup> Աստուծոյ տաղաւար դարձնենք:

Երկրորդ՝ հոգու երեք մասերը խոհեմութեամբ, արիութեամբ, ողջախոհութեամբ եւ արդարութեամբ զարդարելով<sup>14</sup> Աստուծոյ տաղաւար կազմենք:

Երրորդ՝ բարոյական, տնօրինական եւ քաղաքական առաքինութիւններով<sup>15</sup> տուն շինենք Նրա համար:

Չորրորդ՝ առաքինութեան երեսնաւոր, վաթսուցաւոր եւ հարիւրաւոր պտուղներով<sup>16</sup> Աստուծոյ տաճար կառուցենք:

Հինգերորդ՝ երեք յիսնեակ\* կկարգենք՝ Աղուհացի, Եղիայի եւ Մովսէսի<sup>17</sup>:

Վեցերորդ՝ հաւատով, յոյսով եւ սիրով Քեզ համար օթեան կշինենք:

Եօթերորդ՝ երեք ժամանակները՝ մանկութիւնը, երիտասարդութիւնն ու ծերութիւնը, Քեզ կնուիրենք:

Ութերորդ՝ կուսութեամբ, ողջախոհութեամբ եւ ապաշխարութեամբ<sup>18</sup> Քեզ համար տաճար կշինենք:

Իններորդ՝ մարգարէական, առաքելական ու վարդապետական խօսքերով կփառաբանենք Քեզ:

Տասներորդ՝ կեանքում, մահուան մէջ եւ հանդերձեալում Քեզ բնակարան կլինենք:

**Ը. Իսկ ինչո՞ւ Տէրը ամպով երեւաց:**

Նախ՝ որովհետեւ դա յատկանշական է Աստուծոյ համար, ինչպէս գրուած է. «Նա ամպերի

\* Ցիսնեակ է կոչում մեծ՝ եօթ շաբաթ տեւողութիւն ունեցող պահոց շրջանը:

վրայ դրեց իր ընթացքը»\*, եւ թէ՛ «Ահա՛ Տէրը նստած է թեթեւ ամպի վրայ»†, եւ կամ՝ «Մի ամպ ծածկեց Նրան աշակերտների աչքից»‡:

Երկրորդ՝ քանի որ այն լուսաւոր էր§, իրենից եկող ճայնով\*\* խորհրդանշում էր պարզեւների խոստումը՝ ո՛չ ինչպէս Հին Ուխտը կնքելու ծամանակ, երբ Տէրը խաւարի ու մէգի միջից էր խօսում ահարկու ճայնով††:

Երրորդ՝ լուսաւոր ամպը խորհրդանշում էր Սուրբ Հոգին, որով այստեղ բացայայտուեց Սուրբ Երրորդութիւնը: Երրորդութեան խորհրդանշն էր նաեւ աշակերտների թիւը, ինչպէս եւ՝ Մովսէսն ու Եղիան Տիրոջ հետ միասին: Այլեւ Հայրը վկայելով, Սուրբ Հոգին ամպի երեւալով եւ Որդին պայծառակերպութեամբ՝ Աստուածութեան երեք Անձերը յայտնեցին: Երրորդութիւնն էր խորհրդանշում նաեւ Պետրոսի ասածը, թէ՛ «Երեք տաղաւար պատրաստենք»:

Իսկ Հօր՝ երկնքից վկայելը պապանձեցրեց երկաթնակների<sup>19</sup>, որոնք չեն խոստովանում Բանը՝ մարմնի հետ միաւորուած Մի բնութեամբ, որի համար էլ ասում է. «Դա է (այսինքն՝ Միաւորուածը մարմնի հետ) Իմ սիրելի Որդին»‡‡: Եւ դարձեալ՝ Հայրը երկնքից վկայեց, քանզի թէեւ Յորդանանում նոյն ճայնը եղաւ§§, բայց աշակերտները դրանով չճանաչեցին Քրիստոսի Աստուածութիւնը: Մինչդեռ այստեղ խօսելով՝ նրանց հաստատեց մեր Տիրոջ հաւատի

\* Հմտ. Սաղմ. ԺԳ 3:

† Եւ. ԺԹ 1

‡ Տե՛ս Գործ. Ա 9:

§ Տե՛ս Մատթ. ԺԷ 5:

\*\* Նոյն տեղում

†† Տե՛ս Ել. ԺԹ 16, 19-20, Ի 18:

‡‡ Մատթ. ԺԷ 5

§§ Տե՛ս Մատթ. Գ 17, Մարկ. 11, Դով. 22:



մէջ:

Ք. Այժմ տեսնենք, թէ ինչու առաքելացիներն ընկան ձայնի պատճառով, քանզի նման ձայն եղաւ թէ՛ Յորդանանում\*, թէ՛ Գախքան խաչելութիւնը†, սակայն նրանք չընկան:

Նախ՝ որովհետեւ տեղը բարձր էր եւ ահագոյն:

Երկրորդ՝ ամայի էր եւ անմարդաբնակ:

Երրորդ՝ խիստ պայծառ էր՝ արեւից էլ առաւել:

Չորրորդ՝ լուսատր ամպը ծածկել էր իրենց:

Հինգերորդ՝ տեսնում էին այլափոխում Քրիստոսին:

Իսկ ինչո՞ւ Քրիստոս բարձրացրեց նրանց‡. որպէսզի ապշելու պատճառով նրանց մտքից դուրս չգայ իրենց տեսածը, եւ որպէսզի, տեսնելով միայն Քրիստոսին առանց Մովսէսի ու Եղիայի, հասկանան, որ ձայնը Տիրոջն էր վերաբերում:

Եւ պատուիրեց չյայտնել§, որովհետեւ ժողովուրդը չէր կարող այդ հասկանալ եւ առաւել կկասկածէր՝ Քրիստոսին խաչի վրայ տեսնելով: Եւ չէին հաւատայ ո՛չ Մովսէսի ու Եղիայի գալուն, ո՛չ էլ առաքելացիների կողմից երկնային ձայնը լսելուն՝ այդպիսի փառքը տեսնելուն նրանց անարժան համարելով: Եւ վերջապէս՝ դրանով Տէրն ուսուցանեց, որ քանի դեռ կենդանի ենք, չպէտք է յայտնի դարձնենք մեր առաքինութիւններն ու շնորհները:

Ժ. Իսկ այժմ տեսնենք, թէ ինչու ենք տօնը

\* Տե՛ս Մատթ. Գ 17, Մարկ. Ա 11, Դով. Գ 22:

† Տե՛ս Յովն. ԺԲ 28:

‡ Տե՛ս Մատթ. Ժէ 7:

§ Տե՛ս Մատթ. Ժէ 9, Մարկ. Թ 8, հմմտ. Դով. Թ 36:

Վարդապետ կոչում:

Սա շատ բացատրութիւններ ունի՝ Տիրոջը վարդի հետ համեմատելով:

Նախ՝ ինչպէս որ վարդը իրեն ցոյց տալուց առաջ թաքնուած է լինում իր պատեանի մէջ, այնպէս էլ Տէրը մինչեւ պայծառակերպուելը իր մէջ կրում էր Աստուածութեան պայծառութիւնը:

Երկրորդ՝ ինչպէս որ վարդը բացուելով՝ յայտնում է բոլորին, այսպէս էլ մեր Տէրը, այսօր պայծառակերպուելով, յայտնեց իր Աստուածութիւնը:

Երրորդ՝ ինչպէս որ «վարդ» անունը ցոյց է տալիս նրա գուարթ էութիւնը, այդպէս էլ մեր Տիրոջ անունը՝ «Աստուած», Նրա էութիւնն է արտայայտում<sup>20</sup>:

Չորրորդ՝ վարդը փշերի մէջ է աճում. այսպէս եւ մեր Տէրը հրեաների մէջ երեսաց, որոնց կողմից էլ խաչուեց:

Հինգերորդ՝ վարդը ծաղկում է միայն իր հասակի լրմանը հասնելուց յետոյ. այսպէս եւ Տէրը հասաւ կատարեալ հասակի, այսինքն՝ դարձաւ երեսնամեայ, եւ ապա՝ ցոյց տուեց իր Աստուածութիւնը:

Վեցերորդ՝ վարդից անուշահոտութիւն է բուրում. այսպէս անուշահոտութիւն բուրեց Քրիստոսի պայծառակերպութիւնից, որից թմբելով՝ աշակերտները անջեցին:

Եօթերորդ՝ վարդը չորս գուներանգ ունի՝ կանաչ, կարմիր, սպիտակ եւ դեղին: Այսպէս եւ մեր Տիրոջ մօտ տեսանելի են այս չորս երանգները. դեղինը ցոյց է տալիս Քրիստոսի անմեղութիւնը (ինչպէս գրուած է. «Մեղք չգործեց, եւ Նրա բերանում նենգութիւն չգտնուեց»<sup>21</sup>). սպիտակութիւն

\* Ա Պետ. Բ 22

Աստուածութիւնն է՝ մարմնում պարունակուած. կարմրութիւնը խաչի վրայ արեամբ ներկուելն է («Ինչո՞ւ է կարմիր Քո հանդերձը»<sup>\*</sup>). իսկ կանաչութիւնը՝ Նրա հասակի գեղեցկութիւնը («Նա գեղեցիկ է մարդկանց բոլոր որդիներին»<sup>†</sup>):

Ութերորդ՝ վարդը պատուած է հինգ պատեանով. այսպէս էլ մեր Տէրը կատարելապէս վերցրեց մարդկային բնութեան հինգ զգայարանները:

Իններորդ՝ վարդը բուծիչ է սրտի համար. մեր Տիրոջ Մարմինն ու Արիւնն էլ բուծիչ է հոգիների համար և մեղքերի քաւիչ:

Տասներորդ՝ վարդը ցածր թփերի վրայ է աճում. այսպէս և Տէրն է աւում. «Ես ո՞ր պիտի հանգչեմ, եթէ ոչ հեզերի ու խոնարհների և նրանց մէջ, ովքեր դողում են Իմ անունից»<sup>‡</sup>:

Իսկ ինչո՞ւ ենք այսօր տօնում. չէ՞ որ Տէրը պայծառակերպութեան իր խաչելութիւնից քառասուն օր առաջ:

Այն պատճառով, որ ասաց. «Այդ տեսիլքը ոչ ոքի չստէ՛ք, մինչեւ որ Մարդու Որդին մեռելներից յարութիւն առնի»<sup>§</sup>, որի համար էլ Տիրոջ Յարութիւնը տօնելուց լետոյ՝ այս շրջանում ենք կատարում Վարդավառի տօնը:

Դարձեալ՝ այդ ասելով առաքելներից՝ Տէրը ոչեք, որ երբ մեռելներն էլ յարութիւն առնեն ու մտնեն քաղաք, երբ երկրաշարժ լինի, և արեւը խաւարի<sup>\*\*</sup>, երբ իրենք ընդունեն Սուրբ Հոգին<sup>††</sup> և

մեռելներին յարութիւն տան, այնժամ ժողովուրդը կհաւատայ, որ իրենց Վարդապտը բերեց Եղիային: Եւ, տեսնելով քաղաք մտած քազում մեռեալների, կհաւատան, որ Քրիստոս նաեւ Մովսէսին յարութիւն տուեց: Նաեւ տեսնելով իրենց արբենալը Սուրբ Հոգով՝ չեն կասկածի, որ այն ժամանակ էլ տեսել էին պայծառակերպուած Քրիստոսին և լսել Հօր ձայնը: Եւ քանի որ երկրաշարժ եղաւ, արեգակը խաւարեց, և Ինքը Տէրը երրորդ օրը յարութիւն առաւ, ուրեմն ե՛ր պայծառակերպուել էր:

Արդ, երանելի են առաքելները, որոնք յարկակից են Քրիստոսին և տեսանող Նրա փառքի: Բայց մենք, եթէ կամենանք, կարող ենք անելիս տեսնել:

Քանզի նրանք փոքր ի շատէ, կիսաբաց աչքերով տեսան, որովհետեւ չէին կարող անելիս տանել, իսկ ովքեր արժանաւոր գտնուեն, Նրան կտեսնեն լիակատար փառքով զարդարուած:

Երկրորդ՝ Պայծառակերպութեան ժամանակ առաքելները Քրիստոսին Մովսէսի ու Եղիայի հետ տեսան, իսկ վերջին Օրը՝ Նրան տեսնելու ենք բիրաւոր հրեշտակներով ու սերովբէներով շրջապատուած<sup>\*</sup>:

Երրորդ՝ այստեղ ամպն էր լուսաւոր յարկը, որից հնչեց Հօր ձայնը. իսկ այնտեղ լուսեղէն երկինքը գալարուելով<sup>†</sup> տուն և օթեան է լինելու տեսնողների համար՝ յայտնապէս ցոյց տալով Աստուծոյ փառքը:

Չորրորդ՝ այս տեսումը լեռան վրայ՝ երկրում եղաւ, ուր հող է և մոխիր, իսկ հանդերձեալում Տէրը երեսալու է իմանալի<sup>‡</sup> լեռան վրայ՝ աս-

\* Եւ. 49 2

† Տե՛ս Սաղմ. 107 3:

‡ Տե՛ս Եւ. 42 2:

§ Մատթ. ԺԷ 9, Մարկ Թ 8

\*\* Տե՛ս Մատթ. ԻԷ 45, 51-53, Մարկ. ԺԵ 33, Ղուկ. ԻԳ 44:

†† Տե՛ս Գործ. Բ 1-13:

\* Տե՛ս Մատթ. ԻԵ 31, Բ Թեւ Ա 7:

† Տե՛ս Եւ. ԼԳ 4, Յայտն. Զ 14:

‡ Իմանալի - անմիտքակամ, հոգեղէն

տոսածակերտ խորանում\*:

Հինգերորդ՝ այստեղ առաքելները մի պահ տեսան ու ցնծացին, իսկ այնտեղ լինելու է ոչ թե մի պահ, այլ մշտապես՝ յարազուարճ բերկրանքով:

Վեցերորդ՝ այստեղ աշակերտները միայն տեսնում էին, իսկ այնտեղ տեսնողներն իրենք էլ պայծառութեան մէջ են լինելու՝ արեգակի նման՝ ըստ Տիրոջ խօսքի†:

Եօթերորդ՝ այստեղ որոտ ու դղրդիւն եղաւ, որի ահից առաքելները թմբեցին, իսկ այնտեղ կհնչի քաղցր բարբառը. «Եկէ՛ք, իմ Հօր օրհնեալներ, ժառանգեցէ՛ք արքայութիւնը»‡:

Ութերորդ՝ այստեղ աշակերտների մէջ տակաւին երկիւղ ու տարակոյս կար, որի պատճառով էլ ասացին. «Լաւ է, որ մենք այստեղ լինենք»§, մինչդեռ այնտեղ վերանալու են ցաւն ու տրտմութիւնը\*\*:

Իններորդ՝ այստեղ չգիտէին, թէ ինչ խօսեմ††, իսկ այնտեղ աստուածային գիտութեան լիութիւնն է, քանզի ինչ որ այստեղ մտաւնում ենք, այնտեղ յիշելու ենք:

Տասներորդ՝ այստեղ, Տիրոջ պայծառութեան մէջ, երկու բառ իսկ չկարողացան խօսել Բրիստոսի հետ դէմ-յանդիման, իսկ այնտեղ Նրա հետ դէմ առ դէմ†† խօսակից ենք լինելու, որին թող արժանացնի մեզ մեր Բրիստոս Աստուած. եւ Նրան փա՛րց յաւիտեանս. ամէն:

\* Տե՛ս Յայտն. Ը 3, ԺԱ 5, ԻԱ 3:

† Տե՛ս Մատթ. ԺԳ 43:

‡ Տե՛ս Մատթ. ԻԵ 34:

§ Տե՛ս Մատթ. ԺԷ 4:

\*\* Տե՛ս Ես. ԾԱ 11:

†† Տե՛ս Մարկ. Թ 5, Ղուկ. Թ 33:

‡‡ Հմտո. Ա Կոր. ԺԳ 12, Բ Կոր. Գ 18:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 «Ծագումն ճշմարիտ փառաց Ամենակալին»\*. այսպէս է բնութագրում Ասողոսն արքան Իմաստութեանը: Իմաստութիւն է կոչուում եւ Ինքը Որդի Աստուած, ինչպէս ասում է ս. Ներսէս Շնորհալի. «Իմաստութիւնն Հօր Յիսուս», Ում եւ զիմում է ս. Գրիգոր Տաթևացին՝ քարոզի սկզբում ինչպիսիք լուսաւորել էր միայն աստուածային իմաստութեամբ:

2 Եօթը վերաբերում է Բրիստոսի՝ Իր մահուան ու յարութեան մասին կանխատեսութեան եւ Իրեն Հետեւելու եւ անմահութիւն ժառանգելու պայմանների մասին աշակերտների հետ խօսելու իրողութեանը†: Երեք Համաստեռ ակնադարձներն էլ (Մատթէոսը, Մարկոսը եւ Ղուկասը), զբնով Բրիստոսի Գայժառակերպութեան մասին, այն կապակցում են որս Հետ՝ այն տարբերութեամբ, որ Մատթէոսն ու Մարկոսը ասում են վեց օր յետոյ, իսկ Ղուկասը՝ ութ†:

3 Ըստ Եկեղեցու Հայրերի՝ Աստուծոյ Որդու առաջին Գալուստը եղաւ վեցերորդ գարաշրջանի կամ Հազարամեակի աւարտին, որը վեցօրեայ արարչութեան նմանութեամբ մի ամբողջութիւն է կազմում եւ Համարում է ժամանակների լրումը§: Արան յաջորդում է եօթերորդ գարաշրջանը՝ սուրբ մկրտութեան միջոցով սկզբնական մեղքի մահաց իրենց առաջին յարութիւնը ստացած քրիստոնեաների Հազարամայ Թագաւորութեամբ\*\* (պէտք է գիտենալ, որ այստեղ սուրբգրային Հազար տարին†† ոչ թէ բառացիօրէն Հազար տարի է նշանակում, այլ մեծ տեսողութիւն ունեցող ժամանակաշրջան): Վերջինս տեւելու է մինչեւ Բրիստոսի երկրորդ Գալուստը՝ Տիրոջ մեծ եւ երեւելի Օրը‡‡, երբ մեռելները յարութիւն կառնեն, եւ կգայ ութերորդ գարաշրջանը՝ անվտանգ յաւիտեանը, որում մեր ազականացու մարմինը անազականութիւն կստանայ, եւ այս մահկանացու գոյութիւնը անմահութիւն կՀազարեն§§: Այս գարաշրջանների մասին տե՛ս Ս. Գրիգոր Տաթևացի, «Քարոզ Բրիստոսի Ծննդեան մասին» («Գանձասար», Երեւան, 1995, էջ 8-9) եւ «Քարոզ Սուրբ Հոգու Գալտեան մա-

\* Իմաստ. է 25

† Տե՛ս Մատթ. ԺԶ 21-28, Մարկ. Ը 31-39, Ղուկ. Թ 22-27:

‡ Տե՛ս Ղուկ. Թ 28:

§ Տե՛ս Եփես. Ա 10:

\*\* Տե՛ս Յայտն. Ի 1-6:

†† Տե՛ս Ամյճ, Ի 2, 4, 5, 7:

‡‡ Տե՛ս Յվլ. Բ 30, Գործ. Բ 20:

§§ Ա Կոր. ԺԵ 53

սին» («Գանձասար», Երևան, 1995, էջ 2):

4. Վեցակի շարժումներ են կոչվում վեց ուղղութիւններին (վեր ու վար, աջ եւ ձախ, առաջ եւ ետ) Համապատասխանող արտաբերքը, առեւալ գէշգրում՝ մեղքերը: Դրանք սարաբնոյթ շեղումներ են ուղիղ, արքունի ճանապարհոյ գէշոյ տարբեր ծայրայեղութիւններ:

Դէպի վեր մեղանչական շարժումներն են Հպարտութիւնը, սեփականութիւնն ու ամբարտաւանութիւնը, որոնցով մարդը նմանում է շարին, որը վեր ձգտելով՝ անգուճգն ընկաւ:

Դէպի վար շարժումն է գահավիժելը ծանրագոյն մեղքերի մէջ, որոնք գծոյք են տանում, ինչպէս նաեւ՝ արտմութիւնը, ձանձրոյթն ու ծուլութիւնը:

Դէպի աջ շարժում են կոչվում առհասարակ Հոգու մեղքերը, ի ցոյց մարդկանց բարիք գործելը, գովեստներով Հպարտանալն ու զրկուելը վաստակից, ինչպէս նաեւ արծաթախրութիւնն ու ազանութիւնը, երբ բարին պատճառաբանելով՝ սեւեցուածք են կուտակում:

Դէպի ձախ խտտում են Համարում մարմնական մեղքերը եւ բացայայտ Հրածարումը պատուիրաններից, երբ Հեռանալով Հոգեւոր բարուց՝ շագխուում են մարմնի ցանկութիւններին եւ աշխարհի սիրուն, արուն պոռնիկութեան ու որկրամուլութեան: Դէպի ձախ շարժում են Համարում նաեւ անհոգութիւնն ու ծուլութիւնը:

Դէպի առաջ մեղանչական շարժումն է մայրանազօրէն չափից եւ սեփական կարողութիւններից աւելի առաքինանալու ձգտումը, ինչպէս նաեւ Աստուծոյ մասին քննելը առուել, քան զրուան է Հոգեւոր զբքերում, եւ կամ, չափից աւելի ջրմանալով ու խղճմտութեամբ սաստկապէս զղջալով, չափազանցուած ապշխարութեան մէջ մտնելը: Դէպի առաջ շարժում են կոչվում նաեւ յանգչելութիւնը, բարկութիւնն ու քինախնդրութիւնը, որ պատճառաբանուում են իրբու թէ ընդգէմ չարի:

Իսկ գէշոյ ետ շարժումներն են բարին գործելու Համար ամենեւին ջանք չթափելը, նեղսրտութիւնն ու յուսահատութիւնը, ինչպէս նաեւ մարմնի կրքերին յանձնուելը:

Այսպէս վեց շարժումներն ընդգրկում եւ խորհրդանշում են մեր մեղքերի ամբողջութիւնը:

5 Ութ խորհուրդներն են որկրամուլութեան, պոռնիկութեան, արծաթախրութեան, ձանձրութեան, արտմութեան, բարկութեան, սեփականութեան եւ ամբարտաւանութեան Հոգեւոր անասանելի շարժումներից, որոնք մեր մէջ սերմանում է սաստանան: Ութ խորհուրդների ուսումնաբեր ծագել եւ զարգացել է արեւելեան անապատականների մօտ, որոնք իրենց Հոգեւոր փորձառութիւնը մանրամասնորէն արտացոյլ են Համապատասխան զրուածքներում: Դրանցից է սուկղաբունի Թարգմանութեամբ մեղ Հասած ս. Աւագր Գոնտացու

«Վասն ութ խորհրդոցն» յայտնի խրատական երկը, ուր նա երբորէն ուսուցանում է խորհուրդների բացայայտման եւ յաղթահարման խորհրդական արուեստը (տե՛ս «Արտոյ Հօրն Աւագրի Գոնտացոյ Վարք եւ մատենագրութիւնք», Վեների, 1907, էջ 31-41), ինչպէս նաեւ «Հնչողէմ պատասխանի ի Գրոց Արոց առ դուան, որ փորձեն զմեզ» աշխատութիւնը, որտեղ մէկ առ մէկ անդրադառնում է բոլոր խորհուրդներին, նրանց մասնաւոր կերպերին ու երբրանգներին՝ նրանց զէմ պատասխան խօսքեր քաղելով Սուրբ Գրքից (տե՛ս նոյն, էջ 217-323):

6 Աստուածութեան փառքը - այսինքն՝ աստուածային բնութեանը յատուկ, աստուածային փառքը: Քրիստոս, իր աշակերտներն առաջ պայծառակերպուելով, բացայայտեց իր մէջ մարդկային բնութեանը միաւորում Աստուածութիւնը:

7 Աւետարանիչների մէջ Յովհաննէսը առաջինն է ոչ թէ մամանկով (նրա Աւետարանը ամենապիւրում է գրուել), այլ իր առաքելական շեղանքների առաւելութեամբ եւ պատուով:

8 Երեսնաւոր, վաթսուներ, Հարիւրաւոր - բարի պտուղ տուող քրիստոնեաների այս կարգը, որ Քրիստոս ուսուցանեց Սերմնացանի առակում\*, ըստ ս. Հայրերի մեկնութեան՝ ցոյց է տալիս Հաւատացեալների երեք դասերը՝ աւանանջաւորներին, կոյսերին եւ կատարեալներին:

Արգ, երեսնաւորները այն անուանացեալներն են, որոնք պարկէշտութեամբ ապրելով, բազում բարի գործեր են կատարում: Վաթսուներներն են իմաստուն կոյսերը†, ովքեր ունեն ողորմութեան իւղը եւ Հեռացել են մարմնական կրքերից: Իսկ Հարիւրաւորներն են կատարեալները, որոնք ոչ միայն սուսը պատուիրաններն են պահում, այլեւ բոլոր խրատները: Դրանք են սուրբ մարտիրոսները, ճշմարտներն ու վարդապետները, որոնք յաղթեցին Հոգու երեք Թշամիներին, մարտիրոսները յաղթեցին աշխարհը, ճշմարտները՝ մարմինը, եւ վարդապետները՝ սաստանային՝ մեղ եւս ուսուցանելով, թէ ինչպէս յաղթել:

9 Արքա մարգարէն եւ Ենովք նահապետը այն երկու ձեռքներին ու ճրագներն են†, որոնք, Աստուծոյ առաջ ապրող քայլելով, արժանացան մարմնով երկինք փոխուելուն‡: Վերջին մամանակներում, նեոփ իշխանութեան օրօք, նրանք պիտի վերադառնան երկիր՝ Աստուծոյ խօսքով ու նշաններով Հրեաներին վկայելու Քրիստոսի Աստուածութիւնը\*\*:

\* Տե՛ս Մատթ. ԺԳ 4-9, 18-23:

† Տե՛ս Մատթ. ԻԵ 1-13:

‡ Տե՛ս Յայտ. ԺԱ 4:

§ Տե՛ս ՄՃ. Ե 24 և Երբ. ԺԱ 5, Գ Թագ. Բ 11:

\*\* Տե՛ս Յագր. ԺԱ:

10 Լուսնիկն զգեստ է հոչում աստուածային Ծնորհի փառքը, որով պարուրուած էր Առամը զբխաւում:

11 Ըստ նեստորի եւ նեստորական Հերձուածի՝ Բրիտանոսի մէջ մարդը եւ Աստուած առանձին եւ ինքնուրոյն զէմքեր են երկու տարբեր բնութեանք եւ միացած են միայն կամքի եւ զօրութեան զործակցութեամբ: Այդ զործակցութեան ընթացքում է, իբր, Բրիտանոսի մարդկային զէմքը, զարգանալով, Հասնում Աստուածութեան Հետ կատարեալ միաւորութեան, որի զագաթնակէտն է Նրա Խաչելութեանը յաջորդող Յարութիւնը: Ուստի մինչ այդ Նա Համեմատաբար անկատար էր:

12 Տիրոջ մարմինը ապականկի ասողները գտնում էին, թէ Նա մինչեւ Խաչելութիւն եւ Յարութիւն տկամայ ենթակայ էր մարմնական տկարութիւնների եւ անմեղանակ կրքերի: Այս Հերձուածի Հիմնադիրը՝ Սեւերիոսը, թէւ մերժում էր Բազիլեոսի ժողովի (տե՛ս ծնթ. 19) «երկու բնութիւն» բանաձեւը, սակայն Բրիտանոսին Համարելով տկամայ ենթակայ մարդկային տկարութիւններին, փաստօրէն, երկարեակ քաղկեդոնականների եւ Նրանց նախակարապետ Նեստորի նման նսնմացնում էր Նրա մէջ մարզու եւ Աստուածութեան կատարեալ միաւորութեան իսկութիւնը՝ այն, ինչ Տէրը ցոյց տուեց իր Պայծառակերպութեամբ:

13 Երեք տաղաւարներն այստեղ, ըստ Տաթևացու, խորհրդանշում են մարդաբանական եւ աստուածապաշտական եռակարգութիւնները, որոնք ներառում են քրիստոնէական կեանքի կարեւորագոյն սկզբունքները:

Արդ, Հոգի, միտք, մաքմին մարդբանական եռակարգութեամբ Տաթևացին ամենից առաջ ներկայացնում է մարզու կազմութիւնը՝ իր պարզագոյն ամբողջականութեամբ: Այս եռակարգութեան քրիստոնէական ըմբռնումը սկզբունքօրէն տարբեր է արտաքին (ոչ քրիստոնէական) պատկերացումներից: Վերջիններին Համար սրանք (Հոգին, միտքը եւ մարմինը) տարբեր գոյացութիւններ են, մինչդեռ, ըստ քրիստոնէական վարդապետութեան, մարզու ունի միայն երկուը՝ Հոգի եւ մարմին, իսկ միտքը Հոգու սուն է, որն անշատ կամ անկախ է նրանից: Վերջինս, սակայն, լինելով Հոգու սկզբնական եւ իշխանական զօրութիւնը, յաճախ դիտարկուած է որպէս առանձին մարդաբանական միաւոր, ինչպէս տուեալ զէպքում՝ ստեղծելով այս եռակարգութիւնը, որտեղ «Հոգին» բառը ցոյց է տալիս մտքին ստորադաս եւ Հոգու՝ նրան ենթակայ զօրութիւնների ամբողջութիւնը:

14 Այս չորս առաքինութիւնների ընդգրկում է զարգացում են մարզու Հոգու երեք Հիմնական բանական, բարկական եւ ցանկական ոլորտները. խոհմտութիւնը բանականի առաքինութիւնն է, արիութիւնը՝ բարկականի, ողջխախտութիւնը՝ ցանկականի, իսկ արգարութիւնը՝ ամբողջ Հոգու: Այս ուսմունքը, որը Եկեղեցու Հայերը որդեգրել են յունական իմաստասիրութիւնից, քրիստոնէական փորձառութեան լոյսի ներ-

քոյ վերաիմաստուորուել եւ խոր զարգացում է ապրել (չորս առաքինութիւնների մասին տե՛ս Գրեգոր վարդապետ, Խոք ճշմարիտ Հաւատքի եւ առաքինաւոր վարքի մասին, «Գանձասար», Երևան, 1992, գլ. Ի-Լէ, էջ 20-32):

15 Առաքինութեան տեսակների այս կարգը նոյնպէս քրիստոնէական վարդապետները փոխառել են յոյն իմաստասէրներից, որոնց Համակարգում սրանք Հանդիսանում են զործնական իմաստասիրութեան կամ իմաստութեան, այսինքն՝ իմաստնաբար ապրելու երեք Հիմնական կողմերը: Բարոյականն է սեփական անձի բարքերը զարդարելը, տնօրինականը՝ տան, իսկ քաղաքականը՝ քաղաքի (տե՛ս Դուալիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, Երևան, 1980, պր. Ի, էջ 100):

Բրիտանոսութիւնը նոր բովանդակութիւն զարդարեց այս ուսմունքին՝ նրանում շեշտադրելով իրականութեան երեք շերտերը (անհատի ներաշխարհը, նրա ընտանեկան-ընկերակցական միջավայրը եւ Հասարակական յարաբերութիւնների ոլորտը) ներդաշնակելու եւ դրանով ծայրայեղութիւններից ու շեղումներից խուսափելու նշանակութիւնը: Բացի այս, այն մեկնաբանում է որպէս զուտ ներանձնական սկզբունքներ պարունակող եռակարգութիւն (տե՛ս Առաքել Սիւնեցի, Լուծմունք սահմանաց սրբոյն Դուալի, Մաղբաս, 1797, էջ 294-295):

16 Տե՛ս ծնթ. 8:

17 Եկեղեցու վաղ շրջանում երեք մեծագոյն՝ Մենդեան, Չապիկի եւ Պայծառակերպութեան տոներըց առաջ կանոնադրուած էր երեք յիսնեակ պահել, որոնք եւ ս. Գրիգոր Տաթևացին Համապատասխանեցնում է Բրիտանոսի, Մովսէսի ու Եղիայի անունների Հետ: Աղուհացի յիսնեակը նա, փաստօրէն, աւելում է Բրիտանոսին՝ ամենայն Հաւանականութեամբ նկատի ունենալով Նրա Մենդեան եւ Աստուածայայտութեան տանի նախորդող յիսնակաց պահքը, որն այժմ վերածուել է շաբաթապահքի: Մովսէսի յիսնեակ ստեղծվ թերևս նկատի ունի Մեծ պահքը, որը Համապատասխանում է Հին Ուխտում Մովսէսի կողմից Հաստատուած գատկական պահքի Հետ: Իսկ Եղիայի, ըստ երեւոյթի, Համապատասխանում է այսօրուայ Եղիական շաբաթապահքին, որը սկսում է անմիջապէս Հոգեգալստից յետոյ՝ ի յիշատակ Եղիա մարգարէի երկինք փոխուելու, Վարդապետի տանից յիսուն օր առաջ:

18 Այս կարգը նման է երեսնաւոր-վաթսուևաւոր-Հարիւրաւորին՝ վերջինիս պէս վերաբերելով աստուածմեծիւնութեան աստիճաններին: Ապաշխարութիւնը առ Աստուած վերբնութեամբ ստորին աստիճանն է եւ միաժամանակ՝ մշտապէս կրկնուելու անհրաժեշտութիւն ունեցող Հիմքը, կուսութիւնը (կամ մտքի եւ մարմնի կուսական մաքրութիւնը) բարձրագոյն, իսկ ողջուխտութիւնը՝ միջին: Ապաշխարութեամբ անձը պահւում է զէպի մեղքն ու աշխարհը դառնալուց, ողջուխտութեամբ

Հաստատում է քրիստոնէական ընթացքի մէջ, իսկ կուսութեամբ կամ կուսակրօնութեամբ՝ դառնում շնորհակիր եւ աստուածընկալ:

19 Երկարնակ են կոչուում Քաղկեդոնի ժողովի (451 թ.) դաւանական եզրայանգումներն ընդունած Եկեղեցիները, որոնք, Քրիստոսի մէջ խոստովանելով երկու՝ մարդկային եւ աստուածային բնութիւնների միաւորութիւնը, չեն ընկալում այն որպէս մի՝ աստուածամարդկային բնութիւն՝ Համաձայն Կիւրեղ Աղեքսանդրացու բանաձեւի. «Մի է մարմնացած Բանի բնութիւնը»:

20 «Աստուած» բառը զրաբարում ստուգաբանում է Հաստիչ (ստեղծիչ) կամ ասա եւ յաստիս անող (այստեղ բերող), այսինքն՝ գոյացուցիչ, արարիչ, եւ կամ կրաւորաբար՝ աստեւոր, Հաստատուն, անշարժ, անփոփոխ, Հզօր եւ այլն (տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1836, Հտ. Ա, էջ 320):

Գրաքարից փոխարդեց եւ ծանօթագրեց

Տիգրան Խաչատրեանը